նան իւրեանց նպաստները ի վերաշինու-թիւն աստուածային Տաճարին Ս. Գէ-որգեայ Սամաթիոյ, որով մեր այնպիսի եղբայրներ առաւելապէս իմն խրախոյս առեալ և ոգևորեալ պիտի մխիթա-րուին ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ։

~~~~~~~~~

## ՀԱՇԻՒ

### ՆԱԽԱԳԱՀԻ ԺՈՂՈՎՈՅՆ ԽՈՐՀՐԴՈՅ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՅԱՆՈՒՆ ՍՐԲՈՅ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐ-ՉԻՆ ՀԱՅՈՑ ՎԱՍՆ 1871 ԱՄԻ.

(Ե. Յ——ն [illegible])

---

Կամենում եմ այս տեղ յիշել այն նորընտիր անդամոց անունները, որոց յիշատակը անմոռանա-լի պիտի մնան ընկերութեան յիշատակարանում. իսկ բոլոր անդամոց անունները իսկզբանէ հաս-տատութեան Մարդասիրական Ընկերութեան որ-քան որ գրուած կան յիշատակարանի մէջ մինչև 1871 տարին, հաշուիս վերջին թերթերում ա-ռանձին ցուցակաւ կառաջարկեմ սիրելի հանդի-սականացդ ի տեղեկութիւն.

### 1871 տարւոյ ընթացքում փոխուած ան-դամները ահա որոնք են.

Անփոփոխները.

1. Դերասնիւ իշխանապետ ներգործական պետա-կան խորհրդական սեննեկապետ և Ասպետ Լազա-րեանց Խաչատուր աղայն (այժմ հանգուցեալ), իւր առանձին խրախուսական և քաջալերական նամակի հետ ուղարկեց և անդամակցութեան գումարը։ Ես և իմ ընկերակիցները ի ցոյց ե-րախտագիտութեան կատարել տուինք փառաւոր հանդիսով քաղաքիս նորաշէն սուրբ Լուսաւորիչ եկեղեցում մաղթանք, վասն կենաց և առողջու-թեան նորա, և հոգեհանգիստ՝ Լազարեանց ար-ժանայիշատակ տոհմի բոլոր ննջելոց հոգւոց հա-մար, հրատարակելով պատուական "Արարատի" մէջ ի գիտութիւն համայն ազգին մերոյ, և այն երախտաւորներին, որոնք իւր՝անց ուսումը աւար-տել են Մոսկվայի Լազարեանց Ճեմարանում, 2. Տփխիսարնակ Անտոն Սողոմոնեան Դօրղանեանց, 3. Շուշուարնակ՝ մահտեսի Յովհաննէս Օրբէ-լեանց. 4. Շամախարնակ Յովհաննէս բէգ Շահն-շահեանց. 5. Շուշուարնակ Ոսկան Խաչատրեանց. 6. ընկերութիւն Արէլեանցի և Բէգլարեանցի, 7. Շուշուարնակ Կարապետ Գրիգորեան Աւետեանց, 8. Շուշուարնակ Միքայէլ մահտեսի Յովհաննէս-եան Օրբէլեանց, 9. Շուշուարնակ Յովակիմ Բունիաթեանց, 10. Գօրիցի Ստեփաննոս Բարա-լեանց, 11. Շուշուարնակ Յակոբ Խուբլարեանց, 12. Շուշուարնակ Առաքել Գրիգորեան Բարա-յեանց, 13. Աստիճանաւոր Նաւասարդ Մալա-ֆեանց, 14. Աստիճանաւոր Գրիգոր տէր Համբար-ձումեան տէր Յովհաննիսեանց, 15. Բագուարնակ Սերգէյ Յովհաննիսեան Մելիքեանց, 16. Տփխի-սարնակ Աստուածատուր տէր Յակոբեանց, 17. Շուշուարնակ Պօղոս Գրիգորեան Սարգսեանց, 18. Շամախարնակ կարապետ Յովհաննիսեան Քալանթարեանց.

Տարեկանները.

1. Մովսէս Սերգէյեանց, 2. Սամուէլ Սա-պունչեանց, 3 Գէորգ բէգ Վարդանեանց, 4. Յարութիւն Պոպովեանց, 5 Յովհաննէս Մալի-եանց, 6. Կարապետ Քեօչարեանց, 7. Գէորգ Քիւրքչեանց, 8. Դաւիթ Գրիգորեանց, 9. Անդրէ-աս Մելիքեանց 10. Համբարձում բէգ Իւզբաշ-եանց, 11. Գարասիմ Ժամհարեանց, 12. Աւան Շահինեանց, 13. Պետրոս Յովսէփեանց, 14. Զաւմշուտ Վալատեանց, 15 Միքայէլ Զարգար-եանց, 16. Մկրտիչ Ալէքսանեանց, 17 Ղուկաս Ղազարեանց. 18. Ալէքսանդր տէր Յա-կոբեանց, 19. Գրիգոր Միրզայ Աւագեանց, 20. Յակոբ Մեհրապեանց, 21. Մարտիրոս Վասիլեանց, 22. Սարգիս Զարգարեանց, 23. Յակոբ տէր Իսրայէլեանց, 24. Գրիգոր տէր Իսրայէլեանց, 25. Յակոբ Փերզատեանց, 26. Յա-կոբ Բաբախանեանց, 27. Առաքել Թումայեանց, 28. Եղիայ Եղիազարեանց, 29. Յովհաննէս Պատուականեանց, 30. Յովհաննէս Միքայէլ-եանց, 31. Յովհաննէս Սերգէյեանց, 32. Թով-մաս Սերգէյեանց, 33. Յարութիւն Մելիքեանց, 34. Յարութիւն Շահնազարեանց, 35 Զաւատ Դալեանց, 36 Աւետիս բէգ տէր Պետրոսեանց. 37. Սողոմոն Ստեփանեանց, 38. Սերգէյ Շանարանդ-եանց, 39. Բալասի Գրիգորեանց. 40. Արէլ Սողո-մոնեանց Լուարսաբեանց, 41. Անտօն Շմիտէ. 42. Լիւդվիգ Սերգէյեանց. 43. Կարապետ Աղամ-ջանեանց. 44. Մատվէյ Մեռնիկեանց. 45. Կա-րապետ Գրիգորեանց. 46 Յովհաննէս Ալարեանց. 47. Եփրեմ Տէր Մարտիրոսեանց. 48. Գրիգոր Թափայէլեանց. 49. Իւան մահտեսի Օհանեանց. 50. Մկրտիչ մելիք Մուսայեանց. 51. Մինաս Յա-րութիւնեանց. 52. Մկրտիչ Նարաթեանց 53. Վաւվառէ Վարդազարեանց.

Շնորհակալութիւնը պահանջում է չմոռնալ, այլ յի-րաւի հանել այն մարդասիրական ճիգը և աշխա-տանքը, որ քանի մի խորհրդական անդամներ և
~~~~~~~~~

միւս անդամներ Ընկերութեան օգնել են իւրեանց կարողութեան չափ Ընկերութեան միջոցները զօրաւոր կացուցանելու և նորա Անդամոց թիւը բազմացուցանելու համար։ Ես իմ ընկերակից խորհրդոյ Անդամների հետ ի միասին սրտատրութիւն իմ համարում երախտագէտ և սիրառանդ հոգւով մեր խորին շնորհակալութիւնը յայտնել, նախ. խորհրդոյ անդամ Պարոն Յակոբ Այրէսխանցին, որ սկսեալ Ընկերութեան հաստատութեան օրից, որպէս վկայում են և նորա գործերը, քաջասիրտ ըստ առաքելոյն Պօղոսի «Զ յետինսն մոռանալով և դէպ ի յառաջ նկրտելով», իւր խոհեմ բնաւորութեամբ կարողացել է գրաւել տեղւոյս հասարակութեան սիրտը և իւրաքանչիւր քայլում ընկերութեան գործը որպէս թէ արհեստ է արել իւր համար, մոռանալով համարեա թէ իւր սեպհական կարիքները, որ աւուր վաստակում է քաջ մշակի նման հերկել մարմնեղէն սրտերի կոշտ ու կալիտ հողերը իւր քաջախօս և բնածիր շնորհքովը, բարի սերմեր ցանելով բանաւոր երկիրների վերայ։ Այս աշխատէր Պարոնը իւրաքանչիւր տարի մեր խղճալի ազգային տնանկաց, որբոց և գեռահաս մանկանց համար հաւաքէլ բանաւոր ծաղիկներ ժողովելով ընծայաբերում է Ընկերութեան նորա գոյութիւնը և տևողութիւնը անշարժ պահպանելու համար. որով մեծ ուրախութիւն և քաջալերութիւն է տալի մեր ամենեցունց։ Այս տարի ևս յիշեալ Պարոնը կարողացաւ գտնել չորս անձինք, անփոփոխ անդամներ։ Երկրորդ. Խորհրդոյ անդամ և գանձապետ Գրիգոր Թումայեանցն, նոյնպէս իւր անդադար աշխատութեամբ Ընկերութեան գումարաց տոկոսիքը շատացնելով և միշտ խնայողութիւն պահպանելով գումարաց և ծախսարարութեան մէջ, կարողացել է բաց ի սորանից գտնել և երկու անփոփոխ անդամներ։ Այս պարոնի անձնազոհ գործունէութիւնը, որ քանի մի օրինակներով Բագու քաղաքում ցոյց է տուել մինչև մեր Ընկերութեան հաստատուելը և յետ այնորիկ, անմոռանալի է և պիտի մնայ իւր ընկերակցաց և նորա ծանօթ անձանց սրտերում։ Նորա յայտնի և անյայտ կարեկցութիւնները և ջանքը մանրամասն գրելը աւելորդ եմ համարում. փոխարէնը թող նա ստանայ իւր Աստեղծողից։ Գանք այժմ միւս աշխատակից անդամները. — 1. Շուշուաբնակ պարոն Օհանջանեան Գրիգորեան Հախումեանց, որ գտել է մի անփոփոխ անդամ։ 2. Շուշուաբնակ Յովակիմ Բունեաթեանց՝ մի անփոփոխ անդամ։ 3. Բագուաբնակ մեծապատիւ Գրիգոր Այվազեանց մի անփոփոխ և տասը Տարեկան անդամներ։ 4. Խորհրդոյ անդամ պարոն Յովհաննէս Ղազարեանցը երկու անփոփոխ անդամ (պապական)։ 5. Խորհրդոյ անդամ և Ատենադպիր Սարգիսն Վարշամեանց և իւր անդամակից պարոն Թումայեանցն և Այրէսխանցն միասին գտել են Բագու քաղաքում քառասուն և երկու տարեկան անդամներ։ 6. Իշխան Պաւլ Երկայնաբազուկ Արղութեանցն մի անփոփոխ անդամ։ 7. Շամախաբնակ Յարութիւն Պետրոսեան Ներսիսեանց մի անփոփոխ անդամ։ 8. Նուխուաբնակ պարոն Գրիգորն Դիլոյտարեանց մի անփոփոխ անդամ։ 9. Շուշուաբնակ պարոն Առաքելն Տառուրեանց երեք անփոփոխ անդամներ, որոնցից ստացած գումարը շահցրել է այնքան, որ Ընկերութիւնը օգուտ է ստացել ևս երեք հարիւր ռուբ. որոյ մասին մենք կրկին պարտաւորութիւն ենք համարում յայտնել Նորան հրապարակաւ մեր սրտեռանդն շնորհակալութիւնը։ Բաց ի սրանից պարոն Տառուրեանցը իւր արժանապատիւ Նուիրաբերութեամբը պարտաւորել է Ընկերութեան անդամներին մի ուրիշ նուիրաբերութեամբ, տալով իւր սեպհականութիւնից 45 ռուբ. արծաթ Ընկերութեան ազգային ընթերցարանի և գրադարանի գրեանց թիւը աւելացնելու համար, որ և արդէն ուղարկված են ուր հարկն է յիշեալ նպատակի համար։ Այս յիշեալ պարոնը իւր յաճախակի այցելութեամբ և ընծայաբերութեամբը աշակերտուհեաց պակաս քաջալերութիւն չէ ցոյց տուած ուսումնարանի մասին։ 10. Ընկերութեան Գրադարանին ընծայել են զանազան գրեանք և յիշատակ արժանապատիւ անձինքը. 1. Թադէոս Աւագ քահանայ Բուդաղեանցը 13 հատոր գրեանք և տասն ռուբլի։ 2. Այրի երեցկին հանգուցեալ Տէր Սերովբէի Պօղոսեան 35 հատոր. 3. Բագուաբնակ Զաքարիա Տիրացու Մեսրովբեան Ալանեանցն 26 հատոր ընտիր գրեանք։ 4. Վարժապետ Աւագ Գրիգորեանցն 10 հատոր։ 5. Բագուաբնակ Գրիգոր Այվազեանց 14 հատոր։ 6. Շամախաբնակ Սերովբէ Բարաղամեանցն 4 հատոր։ 7. Շուշուաբնակ Մովսէս բէկ Սարումեանցն մի հատ Տելեմաք։ 8. Շամախւոյ եկեղեցւոյ Սարկաւագ Բաղտասարն Բաղտասարեանց հինգ հատոր ընտիր գրեանք։ 9. Բագուաբնակ Մկրտիչ Մխիթարեանց վեց հատոր։ 10. Հանգուցեալ Խաչատուր աղայ Ղազարեանց յիսուն հատոր։ 11. Շուշուաբնակ Յովհաննէս Գրիգորեան Հախումեանց քանի մի հին օրագիրներ։ 12. Խորհրդոյ անդամ պարոն Յովհաննէսն Մկրտչեան Տէր Յակոբեանց 15 հատ գեղեցիկ կարթեր զանազան կենդանեաց *).

Գանք այժմ իմ և Խորհրդոյ Անդամոց կառավարութեան, կարգադրութեան և այլ գործունէութեանց վերայ։

Տեսանելով, որ Ընկերութեան Օրիորդաց դպրոցի աշակերտուհեաց և Ծխական ուսումնարանի տղայոց ուսման ասպարիզում կաղ ի կաղ

(*) Գրատան ընծայաբերութիւն արել են նմանապէս Նախագահ Խորհրդոյ ժողովոյն Պ. Մովսէս Զօհրաբեանցն և Ատենադպիր Ս. Վարշամեանցն, որոնցից առաջինը նուիրել է 157 հատ գրեանք Հայոց և Ռուսաց լեզուներով. իսկ երկրորդը 52 հատ նմանապէս զանազան լեզուներով։

ընթանալը և զգալով անշուշտ հարկաւորութիւն մի առանձին վերատեսչի այս երկու դպրոցաց համար. մենք միջնորդական նամակաւ առ Թեմական Առաջնորդն Շամախւոյ հրաւիրեցինք այն տեղի եկեղեցւոյ Սարկաւագ Աւետիք Փինաչեանցին, ընտրելով յառաջագոյն նորա մի այդպիսի պաշտօնի համար ընդունակութիւնը. Ուստի Փինաչեանցն գալով Բագու ի 15 ապրիլի 1871 ամի, այն օրից վարում է բաց ի վերատեսչութենից Հայոց լեզուի և կրօնուսուցչութեան պաշտօն, կատարում և Ընկերութեան միւս յանձնարարութիւնները. վասն որոյ հոգալով նոյն Սարկաւագի ապրուստի և անփոյթ կառավարութեան մասին և համեմատելով նորա ցոյց տուած աշխատութիւնը երկսեռ ուսանողաց վերայ և առ հասարակ ընկերութեան գործունէութեան ասպարիզում, ի 1ն յունիսի օրագրութեամբ սահմանադրեցինք մինչ ցառանձին կարգադրութիւն խորհրդոյն ժողովոյ, որ առնելոց է յետ նորա Արեգայ ձեռնադրուելուն, ընկերութեան գումարից նշանակել առ այժմ իւրաքանչիւր ամիս քսան և հինգ ռուբ. որոյ մասին և յանձնել գանձապետ Պարոն Թումայեանցին սկսեալ ի 15 էն ապրիլի շարունակաբար տալ սարկաւագ Փինաչեանցին պարտուպատշաճ ստորագրութեամբ ինչպէս հարկն է.

Ի պատիւ և ի յարգանս միջնորդական նամակաց Սրբազան Առաջնորդին Շամախւոյ Թեմի Անդրէաս Արքեպիսկոպոսի, խորհուրդը ընդունելով երկու պատանիներ Աստուածատուրն Գալստեանց և Ներսէսն Արելեանց որպէս որդեգիր, առանձին օրագրութեամբք յ30 յունիսի և ի 13 հոկտեմ. սահմանադրեցին վասն ապրուստի յիշեալ անձանց (որոնք շարունակում են իւրեանց ուսումը), մինչ ցաւարտիլ նոցա հատուցանել ի տարին իւրաքանչիւրին հարիւր ռուբ. զորս նոքա ստանումեն շարունակ առաջինը ի 1-էն Սեպտեմբերի, իսկ երկրորդն ի 13 էն հոկտեմբերի 1871 ամի.

Հարցաքննութեան օրը անցեալ տարի խորհրդոյ Անդամք չտեսանելով ծխական և օրիորդական դպրոցներում ուսանող մանկտեաց մէջ մի նախանձելի յառաջադիմութիւն, և ակն յայտնի իմանալով, թոյլ ընթացութեան պատճառը ըստ մեծի մասին այն է, որ այս դպրոցները որպէս բարձի թողի արած մնացել էն մի միայն ուսուցչաց իրաւանց ներքոյ առանց հոգաբարձուաց խնամքի և վերատեսչութեան, և ի վերայ այսր ամենայնի ընկերութեան գումարը անընդհատ գործ է ածվում առանց փոխադարձ արդիւնաւորութեան. վասն որոյ վերոյիշեալ դպրոցաց թըշուառ դրութիւնը բարւոքելոյ աղագաւ ի 10 Սեպտեմ. սահմանադրեցին առաջադրել որպէս հոգաբարձուաց՝ նմանապէս և ընկերութեան ժողովոյ բոլոր խորհրդական Անդամոց, որ իւրաքանչիւրը նրանցից նեղութիւն յանձն առնու ամենայն շաբաթ նշանակեալ օրերում այցելութիւն առնել օրիորդաց և ծխական դպրոցներին և ապա հետևել. նախ՝ որ ուսուցիչները իւրեանց սահմանադրած ժամանակին դասատուութիւնը սկսեն. երկրորդ՝ լսել նոցա օգտաւէտ առաջարկութիւնները կամ գանգատը որպիսի և իցէ ուսումնարանապատկան առարկայի համար. Երրորդ՝ եթէ ժամանակը ներէ՝ մասնաւոր կերպով հարցափորձել քանի մի աշակերտաց, գուցէ գտնուին այնպիսի ընդունակները, որոց խղճալի դրութիւնը թոյլ չէ տալիս հաստատապէս ընթանալ ուսման ասպարիզում, և այս մասին կամ առաջարկել խորհրդին նորա նիստի օրերում, կամ յիշել առանձին մատենում, զոր յանձնուած է Տեսչին վասն ստորագրութեան այցելու Հոգաբարձուաց. Ես ևս նմանապէս հեռի չմնալով այցելութեան պարտաւորութիւնից՝ սրբազան պարտք եմ համարում կատարել իմ այցելութիւնը.

Նուխուայ քաղաքացի երիտասարդ Աւագն Գրիգորեանց գտնուելով ընկերութեան հովանաւորութեան ներքոյ որպէս որդեգիր, թէպէտ իւր ուսումը ըստ չափու կարողութեան շարունակեց Բագուայ գիմնազիայում մինչ ցհինգ տարի, և կարողացաւ անցանել մինչև չորրորդ դասատուն, ստանալով Ընկերութեան գումարից իւրաքանչիւր տարին հարիւր ռուբլի, բայց որովհետև նորա հասակը ու անձնական կարիքը արգելեցին Գրիգորեանցին շարունակել իւր ուսումը, վասն որոյ ներկայանալով Խորհրդին, խնդրեց ազատ կացուցանել և արձակել նորան Ընկերութեան հովանաւորութիւնից. Անդամք Խորհրդոյ իմանալով, որ Գրիգորեանցը չէ կարող առանց այլ իմն օգնականութեան իւր համար ապրուստ ճարել քաղաքումս, և ունենալով ի նկատի, որ Վեհափառ Կաթողիկոսի առանձին կոնդակի զօրութեամբ Խորհրդոյ անդամք տեղւոյս Ծխական ուսումնարանի գործերում ունին իրաւունք հաղորդակցութեան, վասն որոյ յառաջագոյն միաբանելով այս մասին հոգաբարձուաց հետ օրագրութեամբ ի 13 Հոկտեմ. ընդունեցին նրան վարժապետ նոյն ուսումնարանում, նշանակելով նորա համար ռոճիկ 150 ռուբլի տարին ուսումնարանի գումարից.

Օրիորդաց ուսումնարանի Ռուսաց լեզուի վարժուհի Եկատերինեայ Նիկոլայեվնայի ջերմեռանդ աշխատութիւնը տեսանելով, անդամք օրագրութեամբ ի 27 հոկտեմ. նշանակեցին նորա ռոճիկը ի տեղի հարիւր քսան ռուբլւոյ, որ ստանումէր յառաջ, հարիւր յիսուն ռուբլի սկսեալ ի 1էն հոկտեմբերի.

Այժմ ի ցոյց հանդիսականացդ կամենումեմ կարճ ի կարճոյ յայտնել ընկերութեան գումարների շրջանը քաղելով նորա հաշուամատենից, թէ որքան գումար ունէր ընկերութիւնը ի 1 յունվարի 1871 ամի, յընթացս նոյն ամի ո՞րքան

ծախք է ունեցել և թէ որքան է մնում առ 1 յունվարի 1872 ամի (*)։

Աչա վերջացնում եմ խօսքս, ո՛վ բարեկամք և եղբարք իմ, յայտնելով Ձեզ հաւանեալ բարենպատակ ձեռնարկութիւնը խորհրդոյն ժողովոյ։

Որովհետև ընկերութեան օրիորդաց ուսումնարանը, տպարանը, գրադարանը նմանապէս և որբալաց դպրոցը առանձին առանձին տներում տեղաւորվելով Ընկերութեան դրամական միջոցները նուազացնում են, վասն որոյ կամենալով այս անընդհատ ծախքի առաջը առնել, և ի վերայ այսր ամենայնի ի նկատի ունելով և այն, որ եթէ Ընկերութիւնը սկսէր յիշեալ ուսումնարանի և տպարանի համար նոր ի նորոյ շինութիւններ գնել, հարկաւոր էր մեծ գումար, ուստի խորհուրդը միջնորդութեամբ Թեմական Առաջնորդին Շամախւոյ դիմեց առ Վեհափառ Կաթողիկոսն ամենայն Հայոց և խնդրեց, որ Նորին Վեհափառութիւնը բարեհաճի թողուլ Ընկերութեան տեղւոյս Նորաշէն եկեղեցւոյ բակը, որի մէջ կարողանայ շինութիւն առնել։ Ստանալով լուծումն ներկայ առաջարկութեանը, Խորհուրդը սկսեց և աչա շուտով կվերջանայ, որպէս և Դուք կարող էք տեսանել նոյն շինութիւնքը։ Բաց ի տպարանից և օրիորդաց ուսումնարանից պիտի տեղաւորվին նոցա մէջ նաև Թեմական ուսումնարանը, Գրադարանը, Թանգարանը և Առաջնորդարանը։

Այս շինութեանց համար Ընկերութիւնը նշանակել է իւր գանձարանից և ծախս է արել մինչև ցայժմ 6031 մանէթ, որոց մանրամասն հաշիւը աչա կարող էք տեսնել միւս հաշիւների հետ Պարոն Գանձապետի կարդալու հաշուեթերթերում

Կարելի է յուսալ, որ յետ այսորիկ Ընկերութիւնը կարող է փոքր ինչ սրտի հանգստութիւն ստացած ապագայում մխիթարվել, որ նա ունի քանի մի ամենահարկաւոր սեպհականութիւններ, որք ժամանակին յառաջը կառնեն այն աւելորդ ծախքերի, որ այժմ կամայ ակամայ գործ է ածում։ Այս ուրեմն, կրկնումեմ, յետ այսորիկ Ընկերութիւնը հաստատուն հիմն արկանելով Բագու քաղաքում, յոյս կայ, որ նորա գործունէութեան շրջանը կեդրոնանայ այս տեղ, և անշարժ մնալով չտեղափոխուի ոչ մի պատճառաւ մի այլ քաղաք, տարածելով այս տեղից իւր գործունէութիւնը և բարեգործութիւնը ամենայն տեղ, եթէ Աստուծոյ նախախնամութեամբը նորա դրամական միջոցները ևս առաւել կուժովանան և կտան քաջալերութիւն գործունեայ և բարերար Անդամներին։

Միքայէլ Միրզաջանեան Չագրաղեանց.

Ի 25 Յունվ. 1872 ամ.

Ի Բագու։

---

(*) Դրամոց հաշիւը «Արարատը» կտպէ նոյ Ընկերութեան Գանձապետից։

---

ՑՈՒՑԱԿ

անուանց և ազգանուանց հիմնադիր և անփոփոխ անդամոց Մարդասիրական ընկերութեան մինչև 1871 թուականը, և նոցա դրամական ընծայաբերութիւնը։

| | Ռբլ. |
|---|---|
| Թիֆլիզու բնակիչ հանգուցեալ ատեանաւոր Ալէքսէյ Ցարութիւնեան տէր Ղուկասեանց | 5000 |
| Շուշւոյ քաղաքացի Ներսէս Մկրտչեան Կրասիլնիկեանց | 2000 |
| Շուշւոյ քաղաքացի ատեանաւոր Մովսէս Զոհրապեան Զոհրապեանց | 600 |
| Թիֆլիզու բնակիչ հանգուցեալ ատեանաւոր Դաւիթ Արտեմիչ Թումամեանց | 500 |
| Շուշւոյ քաղաքացի Գրիգոր Հայրապետեան Թումայեանց | 500 |
| Շուշւոյ քաղաքացի Միքայէլ Դանիէլեան Հախվերդեանեանց | 700 |
| Բագուայ քաղաքացի հանգուցեալ Սերգէյ Կիրակոսեան Ալիխազեանց | 500 |
| Շամախու քաղաքացի ատեանաւոր Գէորգ բէգ Պօղոսեան Լալայեանց | 700 |
| Շուշւոյ քաղաքացի Յակոբ Իսահակեան Ապրեսեանց | 300 |
| Շուշւոյ քաղաքացի Դաւիթ Յովհաննէսեան Ադամեանց | 500 |
| Շուշւոյ քաղաքացի Օհանջան Գրիգորեան Հախումեանց | 300 |
| Շուշւոյ քաղաքացի Սարգիս Յարութիւնեան Գրիգորեանց | 300 |
| Շուշւոյ քաղաքացի Սարգիս տէր Յովհաննէսեան տէր Գրիգորեանց | 700 |
| Շուշւոյ քաղաքացի Գէորգ Ամիրումեանց | 300 |
| Հաշտարխան քաղաքացի Գրիգոր Իսայեան Մարտանեանց | 100 |
| Շուշւոյ քաղաքացի Գրիգոր Իսահակեան Աղամալեանց | 100 |
| Նուխւոյ բնակիչ Գրիգոր Յովհաննիսեան Դիլտարեանց | 100 |
| Շուշւոյ քաղաքացի Կարապետ Պետրոսեան Միրզայեանց | 100 |
| Բագուայ քաղաքացի Մկրտիչ Յովհաննիսեան Աղամջանեանց | 100 |